Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավատերություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

23
5243
ԱԳՀ
145

Գրիգոր Հ. Ս. Խ. Հ. Կարմիր
Բանակի Քաղաքական Վարչության

№ 1

329.15(47.925):355

Թէ ԻՆՉՊԷՍ Հ. Ս. Խ. Հ. ԿԱՐՄԻՐ
ԶՕՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՊԷՏՔ Է ԿԱՌԱՎԱՐՎԻ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՋԻՇՆԵՐ



1921
ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էրես
1. Բջիջի կազմակերպումը	3
2. Կուսակցական բջիջների իրաւունքներն և պարտականութիւնները	5
3. Ընդհանուր ժողովներ	8
4. Բջիջի կապը կենտրոնական հիմնարկութիւնների հետ.	9
5. Գնդային Բջիջների վերաբերմունքը դէպի կոմիսարները և հրամանատարական կազմը	10
6. Անդամների ընդունելութիւնը և արտաքսումը	12
7. Միջոցներ և հաշուետուութիւն	14
8. Նախագահութեան պարտականութիւնը	15
9. Կնիք	16

145-ԱՑԴ

1. ԲՋԻՇԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Հայաստանի Կոմունիստական Կուսակցության բոլոր անդամները, որոնք գտնվում են կարմիր զորամասերում (դունդ, դիվիզիոն, մարտկոց և այլն) կազմում են այդ զորամասի կուսակցական բջիջը:

2) Կուսակցական բջիջ կազմելու համար զորամասի կոմիսարը կամ Հ. Կ. Կ. անդամներից մեկը, կոմիսարի թույլտվությամբ յայտարարում է Հ. Կ. կուսակցական բջիջ զորամասում հիմնելու համար կազմակերպչական ժողովի մասին և հրավիրում է զորամասում գտնվող բոլոր կուսակցական անդամներին, որոնք ունեն որեւէ վկայագրություն:

3. Առաջին ժողովը ընտրում է 3 հոգուց բաղկացած՝ մի յանձնախումբ ստուգելու համար ներկայացրած կուսակցութիւնից բոլոր վկայագրերը, այդ յանձնախմբի մէջ անդամման պէտք է մտնի գրամասի կոմիսարը, եթէ այդպիսին կայ։ Հետևանքի մասին այս յանձնախումբը զեկուցում է երկրորդ ժողովին։

4. Երկրորդ ժողովը պէտք է կայանայ ոչ ուշ քան եօթ օր առաջին ժողովից յետոյ։ Յանձնախմբի զեկուցումը լսելով անվիճելի վկայագրեր ունեցող ընկերները ընդհանուր ժողովի կողմից հաստատուում են բջիջի անդամներ։

5. Երկրորդ ժողովը ընտրում է մշտական քարտուղար՝ բջիջի գործերը վարելու համար, եթէ բջիջի անդամների թիւը 15ից աւելի չէ։

6. Եթէ անդամների թիւը 15ից աւել է, գործերը վարելու համար ընտրուում է 3 հոգուց բաղկացած նախագահութիւն. եթէ 100ից աւել է, այն ժամանակ 5 հոգուց։

7. Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ բջիջի մի երրորդի պահանջով նախագահութիւնն ու քար-

տուղարը ենթարկուում են վերընտրութեան։

8. Եթէ տուեալ զօրամասում կուսակցութեան անդամներ չլինեն, կուսակցական բջիջը կարող է հեռանալ կուսակցութեան անդամութեան թեկնածուներից զօրամասի կոմիսարի կամ կուսակցութեան յատուկ լիազօր կազմակերպչի միջոցով։

II. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

9. Բջիջների վրայ պարտականութիւն է ընկնում իրականացնել ղեկավարող կուսակցական կազմակերպութիւնների կայացրած որոշումները։

10. Ագիտացիայի և պրոպագանդայի միջոցով իր անդամ կարմիր բանակայիններին շրջանում ընտրեալ կոմունիստական պարզ և կուռ գիտակցութիւն։

11. Իր միջավայրում կուլտուր-կրթական աշխատանք կատարել, որի համար բջիջները կառ պէտք է մանեն զօրամասում արդէն գոյութիւն ունեցող կուլտուր-կրթական յանձնախմբերի մէջ և կամ թէ իրենք պէտք է ստեղծեն զապիսին—հատ ուձայն բարձր կու-

ռակցական բջիջի կամ քաղաքական վարչության ցուցմունքներին։

12. Իր շրջանում անխնայ պայքար մղել կուսակցական կարգապահությունը խախտողների դեմ։

13. Եռանդուն կերպով աջակցել կոմխարին և հրամանատարին՝ կուռելու կարմիր-բանակային կարգապահությունը խախտելու դեմ և անձամբ օրինակ ցույց տալ այդ կարգապահության։

14. Պատերազմի գործողությունների ժամանակ անվեհեր քաջության, զիմացկունության, հավքերության և տոկունության օրինակներ ցույց տալ։ Դիմանալու կրիծանարությունների և զրկանքների։ Ամենագաղտնի ձեռնարկությունները սկսելիս թշնամու թիկունքում հետախուզություն կատարելու հարաբաղդամբեր կապմելու համար կամավորներ փնտռելիս — առաջարկել իրենց ամենամատնգաղտ գործերը անելու։

15. Տեղեկացնել կոմխարին գործատուի տեղի ունեցող ամեն տեսակի անկարգությունների և զեղծումների մասին։ Այդ նպատակով կուսակցական բջիջը աշխատելու է իր անդամներին անցկացնել

վերատուպիչ անտեսական յանձնախմբի մէջ։

16. Բջիջը մշտապէս պէտք է աշխատի մօտեցնել կարմիր բանակայիններին, բանուորներին և տեղական ազգաբնակութեանը, վերացնելով նրանց մէջ ամեն տեսակի թիւրիմացութիւններ։

17. Կուսակցական բջիջի ամբողջ աշխատանքը իւրաքանչիւր կարմիր զօրամասում պիտի լինի կոմունիստներից և համակրողներից ստեղծել ուժեղ կորիզ, որ պիտի ներշնչուած լինի սոցիալիստական հայրենիքի համար ռազմաճակատում յաղթանակներ տանելու լուրջ գիտակցութեամբ և պատրաստ լինի հարկաւոր ժամին անձնական զոհաբերութիւն կատարել յանուն յաղթութեան, իր հետևից տանելով սակաւ գիտակից ընկերներին և ամեն տեղ վիժադրել խուճապային լուրերի տարածմանը։

18. Կուսակցական պրոպագանդան յաջող տանելու համար — բջիջները պարտաւոր են հրթիռային յանձնախմբերի հետ միասին — ա) տարածել քաղաքական ռազմական հարցեր արծարծող լրագրներ և գրականութիւն. բ) կազմակերպել

ընդհանուր ընթերցումներ և դը-
բոյցներ զ) եթէ հնարաւոր է
կազմակերպել դբաղումներ քաղա-
քական դրագիտութեան համար և
այլն։

19. Կուսակցական բջիջները
չեն ժիջամտում հրամանատարա-
կան կազմի գործողութիւններին և
կարգադրութիւններին։

III ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

20. Բջիջի բոլոր անդամներ
հաւաքւում են շաբթէ-շաբաթ հեր-
թական ընդհանուր ժողովի՝ կոմի-
սարի որոշած օրը։

21. Հարկ եղած դէպքում
նոյն կարգով գումարւում է չրսաբ
ժողով։

22. Ռազմական հանգամանք-
ներում կոմիսարի հայեցողութեամբ
ընդհանուր ժողովները կարող են
յետաձգել։

23. Կուսակցութեան անդամ-
ներից ոչ մէջ—չը նայած ծառա-
յութեան մէջ ունեցած իր դիր-
քին, կուսակցութեան ժողովներում
ոչ մի առաւելութեամբ չի օգտւում։

24. Ընդհանուր ժողովի որ-
ձանագրութեան մէջ յիշատակւում
են ներկայ եղող բոլոր անդամները,

պառնց յարգելի պատճառների իրար վրայ 3 ժողովի չը յաճախողը համարւում է բջիջի կազմից դուրս եկած։

25. Բջիջի ժողովը օրինական է համարւում, երբ ներկայ են բոլոր անդամների մէկ երրորդը։ Եթէ ժողովը չի կայանում անդամների բաւականաչափ թւի բացակայութեան պատճառով—այդ ժողով յետաձգւում է կարճ ժամանակով և երկրորդ անգամ օրինական է համարւում անկախ ներկայ եղող անդամների թւից։

26. Ընդհանուր ժողովի բոլոր որոշումները մացւում են արձանագրութեան մէջ, որ ստորագրում են ժողովի նախագահն և քարտուղարը։

27. Ընդհանուր ժողովի բոլոր որոշումները, որոնք որևէ կապ ունեն ազգմանակատի կենտրոնի հետ—այժ են ստանում զօրամասի կոմիսարի հաստատութիւնից յետոյ։

28. Ցանձնարարութիւնների կատարումը յանձնւում է քարտուղարին կամ բջիջի նախագահութեան։

IV ԲՋԻՋԻ ԿԱՊԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ

29. Գնդի կուսակցական կենտ-

բան հանդիսանում է բջիջի նախա-
գահութիւնը։

30. Բանակի քաղաքական
վարչութեան որոշմամբ կարող են
ստեղծել կուսակցական բիւրակա-
յին (գիվիզիային) բիւրօներ՝ որոնք
կազմւում են կուսակցական բջիջ-
ների ներկայացուցիչներից և այլն։

31. Բանակի և ճակատների
քաղաքական վարչութիւնները կա-
րող են գումարել ընդհանուր բա-
նակային և բիւրակային խորհր-
դակցութիւններ՝ քննելու այն հար-
ցերը, որոնք կապ ունեն քաղաքա-
կան աշխատանքի հետ բանակի
մէջ։

32. Խորհրդակցութիւնները
չեն ընտրում սչմի գործադիր մար-
միններ՝ (բիւրօ և այլն)։

33. Կուսակցական բջիջները
կուսակցական կենտրոնների հետ
կապւում են զազաքական վարչու-
թիւնների միջոցով՝ ճակատում հՀա-
յաստանի կոմունիստական կուսակ-
ցութեան տեղական կոմիտէների
միջոցով՝ թիկունքում։

V ԴՆԴԱՑԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՎԵՐԱ-ԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

34. Դնդային բջիջը, յանձին

կոմիսարի՝ կուսակցութեան բարձր հիմնարկութեան կողմից ունի լիազօրություն վարելու կուսակցական գործունէութիւնը ճակատում։ Կոմիսարի և կուսակցականքիչի միջև եղած տարաձայնութեան դէպքում, քիչը իրաւունք ունի բողոքել կուսակցական բարձր մարմնին։

35. Այն ժողովը, որ գումարում է քիչը, բողոքելու կոմիսարի գործունէութեան դէմ, վերջինիս կողմից չի կարող արգելուել կամ փոխուել, այլ կարող է միայն պատերազմական գործողութիւնների պատճառով յետաձգուել ոչ ուշ քան 7 օր։

36. Կոմիսարը իրաւունք չունի արգելել, որ կուսակցական քիչից պատգամաւոր գնայ Քաղաքական վարչութիւնը-գեկուցելու դրութեան մասին կամ բողոքելու նրա գործողութեան դէմ։

37. Կուսակցական քիչի վերայ պարտականութիւն է ընկնում պահպանել և աջակցել վստահութիւն դէպի կոմիսարը—իբրև քաղաքական վարիչի, և դէպի հրամանատարը—իբրև ռազմական դեկավարի։

38. Հրամանատարի պատճառութեան դէպքում կուսակցա

կան բջիջը աջակցում է կոմիսարին ամբողջ գործառույթը նրան հանձնարկելու և դաշտանությունը վերացնելու համար։

VI ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

39. Այս հրահանգների հիման վրայ աշխատող բոլոր կուսակցական բջիջները իրավունք ունեն անդամության թեկնածուներ ընդունել—համաձայն կուսակցական կանոնադրության՝ այսինքն բջիջի երկու անդամի յանձնարարությամբ։ Ճակատում թեկնածուները հաստատվում են իրենց իսկական անգամներ Բանակի Քաղաքական Վարչության կամ Բիւրակային Բիւրոյի կողմից. (տես յոդ. 30.)

թեկնածուին յանձնարարող ընկերները նրա փոխարէն կրում են ամբողջ պատասխանատվությունը։

40. Հ. Կ. Կ. անդամ եղող ընկերները հաստատվում են բջիջի անդամներ հասարակ ցուցակագրությամբ։

41. Բջիջի մէջ մտնել ցանկացողների բոլոր յայտարարությունները քննվում են առաջին ընդհանուր ժողովում. եթէ յայտարարությունները ընդունվում են

—ընտրում են որպէս թեկնածու-
ներ։ Թեկնածուները ենթարկու-
են կուսակցութեան կարգապահա-
թեան և կատարում են բոլոր կու-
սակցական պարտականութիւննե-
բը։ Ընտրութիւնից մի ամիս անց-
նելուց յետոյ թեկնածուները, ընդ-
հանուր ժողովի որոշման համաձայն
ներկայացուում են բանակի Քաղա-
քական վարչութեանը հաստատելու
իբրև իսկական անդամներ։

42. Ինքի բջիջի անդամները
ընդմիշտ կամ ժամանակաւոր կեր-
պով հեռացուում են բջիջից—կու-
սակցական կարգապահութիւնը
կամ այս հրահանգները խախտելու
պատճառով, յատկապէս հարբեցո-
ղութեան, վախկոտութեան և ու-
րիշ անպատուաբեր արարքների հա-
մար։

43. Անդամները բջիջներից
կարող են հեռացնել ա) կուսակցա-
կան քարձր և տեղական հրամար
կութիւնների որոշումով բ) ճակա-
տում—բանակի Քաղաքական վար-
չութեան որոշումով. համաձայն բջի-
ջերընդհանուր ժողովի կամ կամքաւ-
որի առած յայտարարութեան։

44. Ընդհանուր ժողովներում
տեղի ունեցող վիճաբանութիւնների
թեկնածուի կուսակցութեան մէջ
ընդունելու կամ հեռացնելու մասնի

մանրամասնորէն արձանագրուած են ընդհանուր ժողովի արձանագրութեան մէջ, իսկ այդ արձանագրութիւնները ներկայացուած են հնթակայութեան կարգով։

VII ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒ ՀԱՇԻՒԵՏՒՈՒԹԻՒՆ

45. Բոլոր անդամները և թեկնածուները վճարում են անդամաւորք, համաձայն կուսակցութեան կանոնադրութեան իրենց ռոճիկի մէկ տոկոսը։

46. Բոլոր տուրքերը նշանակուած են կուսակցական գրքոյկներում և ուրիշ վկայագիրներում, մասնաւորապէս տարուած է տուրքերի մանրամասն ցուցակագրութիւն և հաշուետուութիւն։

47. Բոլոր գումարները (տուրքերը և միւս եկամուտները) պահուում են նախագահութեան անդամներից մէկի մօտ, որ համարուում է գանձապահ, կամ քարտուղարի մօտ և ծախսուում են՝ նախագահութեան անդամներից մէկի մակագրութեան համաձայն։

48. Ամբողջ եկամուտի կէսը քանակի քաղաքական վարչութեան միջոցով ուղարկուում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէին, իսկ մնացած կէսը ծախսուում է բոլշիկի պէտքերի համար։

49. Քաղաքապետը կամ գանձապետը պարտաւոր է ամեն ամիս հաշիւ ներկայացնել ընդհանուր ժողովին—գումարների գործածութեան մասին։

50. Բլիջի լիկվիդացիայի դեպքում վերջնական հաշուեւորութիւնը և բոլոր գումարները ներկայացուում են համապատասխան քաղաքական բաժիններ, իսկ թիկունքում՝ կուսակցութեան տեղական կոմիտէին։

VII. ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

51. Նախագահութեան վրայ հետևեալ պարտականութիւններն ընկնում ա) անդամների ցուցակագրումը. բ) ընդհանուր ժողովների օրակարգի կազմումը, գ) ընդհանուր ժողովների արձանագրութիւնների կազմումը և կարգին պահպանումը. դ) ընդհանուր ժողովի վճիռների կատարիչը. ե) հաշուեւորութեան վարումը, գումարների գանձումը, պահպանումը և ծախսը. զ) հետևել, որպէսզի բլիջի գործունէութիւնը ամեն քանում համապատասխանէ այս հրահանգների պահանջներին (սրա խախտման առաջին պատասխանատուն նախա-

Ա 23

գանութիւնն է) եէ) շաբաթուայ հաղորդագրութիւնների և թղթակցութիւնների կազմումը դրամական բջիջի գործունէութեան մասին ուղարկելով լրագրներին և քաղաքական վարչութեան ոգի կէտի իրականացումը առանձնապէս կարևորէ։

IX. ԿՆԻՔ

52. Ճակատային և թիկունքային կուսակցական բջիջները սեփական կնիք չունեն, այլ օգտուում են համապատասխան կոմիտէների կնիքով։

ՀԱՅ. ԳՐԱԳԱՍԱՏ ԱՐԽԻՎ

ՀՀ Ազգային գրադարան
NL0836046

-50-
W92
145